ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 66/4

29-ը ապրիլի 2023 թվականի

ԵՊՀ ԻՄ-ում ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումները հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2023թ. ապրիլի 29-ի նիստի թիվ 66/4 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ) ԿԱՏԱՐՈՒՄ

Տնային աշխատանքն ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տարածված տեսակ է, որի կարևոր խնդիրներից մեկն ուսանողի ինքնուրույնության ձևավորումն է: Տնային աշխատանքը մեծապես նպաստում է ուսանողի ուսումնաճանաչողական գործունեություն ծավալելու կարողության զարգացմանը:

Տնային հանձնարարությունները կատարելիս ուսանողը փորձում է ինքնաստուգման տարբեր ձևեր և ընտրում դրանցից իր համար լավագույնը, բացահայտում է իր հիշողության մակարդակը, ակնկալվող արդյունքին հասնելու համար դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ: Այս դեպքում միայն տնային հանձնարարությունների կատարման գործընթացը կդառնա ուսումնառության և ինքնակրթության խթանիչ: Այսինքն՝ տնային աշխատանքն առաջին հերթին ինքնակրթության ճանապարհ է:

Դասակարգենք այն պահանջները, որոնք վերաբերում են ինչպես դասավանդողին, այնպես էլ տնային հանձնարարությունների բնույթին:

Դասավանդողին վերաբերվող պահանջներ	**Առաջադրանքներին ներկայացվող պահանջներ**
1. Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ նպատակ է հետապնդում տնային աշխատանքը: Դասախոսը պետք է ինքն	1.Առաջադրանքի բովանդակությունը պետք է հասկանալի լինի յուրաքանչյուր ուսանողի համար, այսինքն՝ բոլոր ուսանողները պետք

իրեն հարց տա՝ ինչու՞ է հանձնարարում աշխատանքը, ի՞նչ նպատակ է հետապնդում այն, ի՞նչ կարողություն է զարգացնելու այլն:	է իմանան, թե ինչ պիտի անեն և ինչ մեթոդներով:
2. Յուրաքանչյուր դասընթացից տրվող տնային առաջադրանքների ծավալը պետք է համապատասխանեցնել տվյալ կիսամյակի այլ դասընթացներից տրվող ընդհանուր տնային աշխատանքների ծավալին:	2.Առաջադրանքը չի ծառայի նպատակին, եթե դրա հետ միասին չտրվի համապատասխան հրահանգավորում:
3.Տնային աշխատանքի անհրաժեշտությունը պետք է լինի հիմնավորված: Եթե դասախոսը տվյալ օրն աշխատանքը կազմակերպել է այնպես, որ սովորողներն ամբողջ ուսումնական նյութը յուրացրել են լսարանում, ապա կարող է ընդհանրապես տնային աշխատանք չհանձնարարել:	3. Տնային աշխատանքը պետք է անպայման ստուգվի դասախոսի կողմից:
4.Պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը՝ առանձին ուսանողների համար կարելի է մասնակիորեն անհատակացնել նրա նպատակը, ծավալը, կատարման հնարները:	4. Առաջադրանքներրը կարող են լինել տաբեր՝ համընդհանուր, տարբերակված, անհատական և այլն. տեսակն ընտրելիս պետք է հաշվի առնել ուսանողների խմբի առանձնահատկությունները:
5.Տնային աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի շաբաթական 28 ժամը:	5. Հանձնարարություններրը չպետք է լինեն միօրինակ. անհրաժեշտ է ներառել ոչ ստանդարտ հարցեր, դիտարկումներ կատարելու պահանջներ և այլն:
6.Առաջադրանքները կատարելիս ուսանողները կարող են հանդիպել որոշակի դժվարությունների:	6. Առաջադրանքները պետք է ուսանողից պահանջեն համեմատել, վերլուծել, ընդհանրացնել, դասակարգել հաստատել պատճառա-հետևանքային կապերը, ձևավորել եզրահանգումը, յուրացրած գիտելիքները կիրառել նոր իրավիճակում:

Գոյություն ունեն մի շարք կանոններ, որոնք կօգնեն ուսանողներին ճիշտ կատարելու տնային աշխատանքները:

Առաջին. սովորողները պետք է իմանան, որ գիտելիքների յուրացումն ու իմաստավորումը պետք է կրի կենտրոնացված բնույթ: Սա նշանակում է, որ ծրագրային

նյութի ամբողջական ընկալման ու յուրացման համար անհրաժեշտ է սովորել նյութը ոչ թե «մի հայացքով», այլ որոշակի ժամանակի ընթացքում՝ մի քանի անգամ անդրադառնալով ուսումնասիրվող նյութին:

Երկրորդ. տնային աշխատանքն անհրաժեշտ է կատարել հանձնարարված օրը, որովհետև դասի ընթացքում ընկալված նյութը մոռացվում է առաջին 10-12 ժամվա ընթացքում:

Երրորդ. նախապատրաստվելով տնային աշխատանքի կատարմանը՝ անպայման անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական տրամադրվածություն այն ճիշտ կատարելու և ուսումնասիրվող նյութը գիտակցորեն ու ստեղծագործաբար յուրացնելու համար:

Ինչպե՞ս դա անել: Պետք է մանրակրկիտ մշակել այն քայլաշարը, որն անհրաժեշտ է տնային աշխատանքի կատարման համար, հստակեցնել տնային աշխատանքի կատարման նպատակը, չշտապել ու ջանալ այնպես ուսումնասիրել, որ տվյալ նյութը խորապես իմաստավորվի ու յուրացվի:

Չորրորդ. եթե տնային առաջադրանքը ներառում է դասագրքում զետեղված ուսումնական նյութի յուրացումը, ապա դրա կատարումը պետք է սկսել տվյալ թեմայի ուսումնասիրումից. նախ՝ պետք է մտաբերել այն, ինչը մնացել է հիշողության մեջ, ապա՝ անհրաժեշտ է ուշադիր ընթերցել դասագրքի նյութը՝ առանձնացնելով գլխավորը, կատարելով եզրահանգումներ, ձգտելով նյութի յուրացմանն ու իմաստավորմանը: Դրանից հետո պետք է կիրառել վերարտադրելու և ինքնաստուգման հնարները. նյութի պատմում, ընթերցածի պլանի կազմում, դասագրքի մեթոդական կառույցի հարցերի պատասխանում, որպես օրինակ ներկայացված խնդիրների լուծում և այլն: Եթե ինքնաստուգման ընթացքում ծագում են դժվարություններ, անհրաժեշտ է մեկ անգամ ևս աշխատել դասագրքով:

Տնային առաջադրանքների կազմակերպման հիմնականում ձև են.

1. համալսարանային,
2. տարբերակված,
3. անհատական,
4. խմբային:

Համալսարանային տնային աշխատանքն ամենատարածվածն է: Այդպիսի աշխատանքների անընդհատ կիրառումը չի նպաստում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, այնուամենայնիվ, դրանք բացառել պետք չէ, քանի որ դրանց կատարման ընթացքում մշակվում են զանազան հմտություններ, ձևավորվում են անհրաժեշտ կարողություններ:

Անհատական տնային աշխատանքը տրվում է, որպես կանոն, առանձին ուսանողներին՝ որոշակի նպատակով: Այս դեպքում դասախոսի համար դժվար չէ ստուգել տվյալ ուսանողի յուրացրած գիտելիքների ու կարողությունների մակարդակը:

Անհատական տնային աշխատանքները տրվում են, որպեսզի վերացվեն այն բացթողումները, որոնք ունեն սովորողներն առանձին թեմաների ուսումնասիրման արդյունքում: Դրանք գործնական կարողությունների ու հմտությունների մշակմանը նպաստող մարզողական վարժություններ են: Անհատական տնային աշխատանքները կարող են տրվել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ստեղծագործական կարողություններ ու հակումներ զարգացնելու նպատակով:

Խմբային տնային աշխատանքի կատարման ընթացքում ուսանողների որոշակի խմբեր կատարում են ինչ-որ առաջադրանք, որն ընդհանուր լսարանին տրվող առաջադրանքի մասն է: Այդպիսի առաջադրանքները նպատակահարմար է հանձնարարել նախապես՝ պլանավորելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում պիտի սովորողներն ավարտեն հանձնարարությունը: Սա, փաստորեն, նախագծային աշխատանքի մի տարբերակ է, որը նպաստում է ինքնուրույն որոնողական գործունեություն ծավալելու կարողության ձևավորմանը:

Տնային աշխատանք հանձնարարելիս ամեն անգամ հարց է ծագում՝ ու՞մ ներուժը հաշվի առնել տնային աշխատանք հանձնարարելիս՝ ուժե՞ղ, միջի՞ն, թե՞ թույլ ուսանողի: Դասախոսները հաճախակի առաջադրում են տնային աշխատանքներ միջին ուսանողի մակարդակով, որովհետեև եթե հանձնարարվի առաջադրանք թույլ ուսանողի մակարդակով, ապա ուժեղն այն կկատարի շատ արագ և չի ապրի այն հրճվանքը, որը կունենա իր ներուժին համապատասխան աշխատանք կատարելիս: Իսկ եթե հանձնարարվի ուժեղ ուսանողի մակարդակով, ապա թույլ ուսանողը դրա վրա կկորցնի

ավելի շատ ժամանակ և չկատարելու դեպքում կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Միևնույն առաջադրանքը ուժեղների համար կարող է լինել հեշտ, իսկ թույլերի համար՝ բարդ: Արդյունքում ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չեն դրսևորի պատասխանատվություն տնային հանձնարարությունների կատարման նկատմամբ:

Տվյալ խնդրի իրականացման հիմնական ուղին **տարբերակված** մոտեցման ցուցաբերումն է տնային աշխատանքն առաջադրելիս: Ծավալի ու բովանդակության նկատմամբ տարբերակված մոտեցումն իրականցվում է սովորողների առանձնահատկությունների ու ճանաչողական հնարավորությունների հաշվառումամբ: Միայն այդ դեպքում է կատարվում գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ամրապնդում, տրամաբական մտածողության, ինքուրույնության ձևավորում, ուսումնառության նկատմամբ պատասխանատվության զգացումի վերահսկում: Փաստորեն **տարբերակված** տնային աշխատանքը առաջադրելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր անձի անհատական առանձնահատկությունները (ընդունակություններ, հետաքրքրություններ, մտավոր գործունեության առանձնահատկություններ և այլն):

Տնային աշխատանքի ստուգման եղանակները.

1. Առավել տարածված է տնային աշխատանքի համալսարանային ստուգումը: Դասախոսը տնային աշխատանքի բովանդակության շուրջ ամբողջ լսարանին տալիս է ընդհանուր հարց կամ ստուգում է հանձնարարված գրավոր առաջադրանքները: Ուսանողները տալիս են համառոտ պատասխան, նշում են դժվարությունները, որոնք հանդիպել են աշխատանքը կատարելիս: Դասախոսը բացատրում ու շտկում է սխալները, լուծում է չլուծված խնդիրները, կատարում է ամփոփում:

2. Անհատական ստուգումը ենթադրում է մեկ կամ մի քանի ուսանողի բանավոր կամ գրավոր հարցում գրատախտակի մոտ, որի ընթացքում մյուս ուսանողները հետևում են պատասխաններին, անհրաժեշտության դեպքում՝ ուղղում կամ լրացնում:

3. Ընտրովի ստուգման դեպքում դասախոսի հանձնարարությամբ ուսանողներից մեկը ներկայացնում է իր աշխատանքը (գրելով գրատախտակին, կարդալով և այլն), իսկ մյուսները այդ պատասխանի հիման վրա ստուգում են իրենց աշխատանքները: Եթե դասախոսը բացահայտում է, որ ներկայացնող ուսանողը կատարել է որևէ սխալ, ապա

հարցնում է, թե ո՞վ է այլ կերպ գրել և կուրսի օգնությամբ պարզաբանում է, թե ինչպե՞ս կարող են ճիշտ կատարել առաջադրանքը:

4. Որոշ դեպքերում տնային աշխատանքի ստուգման փոխարեն սովորողներին տրվում են նույնատիպ վարժություններ: Դրանց կատարման մակարդակով կարելի է հայտորոշել տնային աշխատանքի որակը:

5. Կարելի է ստուգել նաև անուղղակիորեն՝ թեստերի, այլ բնույթի ինքնուրույն աշխատանքների միջոցով, այնպիսի առաջադրանքների, որոնց բովանդակության մեջ ընդգրկված են նյութեր, որոնք համարժեք են տնային առաջադրանքներին:

6. Ստուգման մի ձև էլ լսարանում ուսանողի ակտիվությունն է, եթե այդ ակտիվության պատճառը տնային աշխատանքի կատարումն է:

7. Ստուգման կարևոր ձև է փոխադարձ ստուգման կազմակերպումը: Բոլոր ուսանողների ներգրավումը տնային աշխատանքի ստուգման գործընթացում: Սխալների, դրանց վերացման ուղիների քննարկումը նպատակահարմար է, քանի որ այն յուրաքանչյուր ուսանողի տալիս է պատկերացումներ յուրացման ու հնարավոր դժվարությունների հաղթահարման մասին: Հայտնի է, որ շատ սովորողներ ավելի հեշտորեն սխալներ են գտնում ուրիշի աշխատանքում, քան՝ իրենց: Փոխստուգման անցկացումն առաջին հերթին կրում է դաստիարակչական բնույթ, բարձրացնում է սովորողների պատասխանատվությունը, նպաստում է ինքնագնահատման բարձրացմանը:

Եթե որևէ ուսանող չի կատարել տնային աշխատանքը, ապա դասախոսը պետք է անպայման բացահայտի դրա պատճառները: Դրանք կարող են լինել ամենատարբեր բնույթի: Այն դեպքում, երբ պարզվում է, որ առաջադրանքը բարդ է, պետք է պարզել, թե ինչու՞մ է դժվարացել և ինչպե՞ս կարելի է այն հաղթահարել: Եթե տնային առաջադրանքը դասախոսը ոչ միշտ է դասապլանում նշում առանձին կետով, ապա տնային աշխատանքի ստուգումը դասի մի մասն է, և այն անհրաժեշտ է անպայման ներառել գործնական դասի պլանում:

2.ԱՇԽԱՏԱՆՔ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Գրքի հետ աշխատելիս անհրաժեշտ է ընտրել գրականությունը, ճիշտ կարդալ սովորելը, գրառումներ կատարելը։ Գրադարանում գրականությունն ընտրելու համար օգտագործվում է այբբենական և համակարգված գրացուցակ՝ կատալոգ (գրքերի ցուցակ)։

Կարևոր է հիշել, որ գրքերի հետ աշխատելու ռացիոնալ հմտություններով խնայվում է ժամանակը և բարձրացվում է արդյունավետությունը։

Գրքերի ճիշտ ընտրությունը կատարվում է դասընթացը վարող դասախոսի խորհրդով։ Անհրաժեշտ գրականությունը կարող է նշված լինել նաև տվյալ դասընթացի մեթոդական ձեռնարկներում։

Գրքերի և գրականության հետ ինքնուրույն աշխատանքը (ինչպես նաև դասընթացի ժամանակ դասախոսի կողմից բարձրացված խնդրի տեսական ինքնուրույն ուսումնասիրություն) ճանաչողության գիտական մեթոդի ձևավորման ամենակարևոր պայմանն է։

Հիմնական քայլերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝

- կազմել գրքերի ցանկ, որոնց պետք է ծանոթանալ,
- գրքերի ցանկը պետք է լինի համակարգված (որոնք են անհրաժեշտ սեմինարների համար, որոնք քննությունների, որոնք են կարող օգտակար լինել ռեֆերատների, հետազոտական և ավարտական աշխատանքներ գրելու համար, և գրքեր, որոնք դուրս են մնում հիմնական ուսումնական գործընթացից և ապահովում են ընդհանուր զարգացվածություն),
- անպայման դուրս գրել յուրաքանչյուր գրքից անհրաժեշտ տվյալները (ռեֆերատներ, հետազոտական և ավարտական աշխատանքներ գրելիս դա ժամանակ կխնայի),
- առանձնացնել այն գրքերը (կամ գրքերի այն գլուխները), որոնք պետք է ավելի ուշադիր կարդալ և որոնք պետք է ուղղակի թերթել,
- գրականության ցանկը կազմելիս անհրաժեշտ է խորհրդակցել դասախոսների և գիտական ղեկավարների հետ, ովքեր կօգնեն կողմնորոշվելու, թե ինչի վրա

պետք ավելի շատ ուշադրություն դարձնել և ինչի վրա պետք չէ ժամանակ վատնել,

- բոլոր կարդացած գրքերը, դասագրքերը և հոդվածները պետք է համառոտագրել, բայց դա չի նշանակում, որ անհրաժեշտ է համառոտագրել «այն ամենը, ինչ պատահի». կարելի է համառոտ գրել հեղինակի հիմնական մտքերը, և երբեմն գրառել առավել առանցքային և կարևոր մեջբերումները (պարտադիր նշել էջերը),
- եթե գիրքը անձնական է, ապա թույլատրվում է գրքի լուսանցքներում կամ գրքի վերջում՝ դատարկ էջերի վրա կատարել հակիրճ գրառումներ, որտեղ պետք է նշել գրքի ամենահետաքրքիր մտքերը և պարտադիր նշել հեղինակի գրքի էջերը,
- պետք է զարգացնել բարդ տեքստեր «ընկալելու» ունակությունը. դրա լավագույն մեթոդը «դանդաղ կարդալ» սովորելն է, երբ պարզ է կարդացած ցանկացած բառը (իսկ եթե բառն անծանոթ է, ապա կամ բառարանի օգնությամբ, կամ դասախոսի օգնությամբ, անհրաժեշտ է այն անպայման սովորել)։

Այսպիսով, գիտական տեքստ կարդալը ճանաչողական գործունեության մի մասն է: Դրա նպատակը տեքստից անհրաժեշտ տեղեկատվություն քաղելն է (դուրս գրելը): Իրականացվող գործողության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով է ընթերցողն ընկալում տպագիր խոսքը (գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, ամբողջությամբ կամ մասամբ յուրացնել այն, քննադատաբար վերլուծել նյութը և այլն):

Գրքի հետ գրագետ աշխատանքը, հատկապես երբ խոսքը գիտական գրականության մասին է, ենթադրում է մի շարք կանոնների պահպանում, որոնց տիրապետման համար անհրաժեշտ է համառորեն սովորել։ Ուսանողների ինքնուրույն աշխատանքը գրքով կազմակերպելու համար դասախոսը պարտավորվում է նրանց նախապատրաստել լուրջ և արդյունավետ աշխատանքի։ Նախ և առաջ պետք է ասել, որ նման աշխատանքները հնարավոր չէ մակերեսորեն կատարել: Հիմնական կանոնը կարդացածի գիտակցված յուրացումը, ըմբռնումը և նպատակին հասնելու ցանկությունն

է՝ ոչ թե մեխանիկական անգիր անելը, մեջբերումների և ինչ-որ հատվածների դուրս գրելը: Գրքով աշխատելու մյուս կանոնը որոշակի հաջորդականություն պահպանելն է:

Նախ, պետք է ծանոթանալ բովանդակությանը և նախաբանին/ներածությանը: Սա տալիս է ընդհանուր կողմնորոշում, պատկերացում տալ գրքի կառուցվածքի և նրանում դիտարկված խնդիրների մասին: Հաջորդ քայլը կարդալն է: Խորհուրդ է տրվում սկզբից ամբողջությամբ կարդալ գիրքը՝ ընդհանուր պատկերացում կազմելու համար: Կրկնակի ընթերցանության դեպքում ընթերցողը ավելի խորն է ըմբռնում գրքի յուրաքանչյուր գլուխը, քննադատական նյութը, առանձնացում է հիմնական գաղափարները, փաստարկների համակարգը, առավել ընդգծված օրինակները և այլն:

Ընթերցանության գլխավոր կանոնը պետք է լինի անծանոթ բառերն ու անունները, տերմինները, արտահայտությունները պարզելը և հասկանալը: Այդ նպատակով ուսանողները պետք է ունենան հատուկ տետրեր կամ նոթատետրեր: Այս առումով կարևոր դեր ունի ուսանողների մատենագիտական պատրաստվածությունը: Այն իր մեջ ներառում է գրքի գիտական ապարատի, տեղեկատու հրապարակումների, կատալոգների (գրացուցակներ) ակտիվ, արագ օգտագործման կարողություն, անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, մշակելու և համակարգելու հմտություն:

Առանձնացնում են գիտական տեքստ կարդալու չորս հիմնական դրույթներ.

1) տեղեկատվական - որոնողական (առաջադրանքը՝ գտնել, առանձնացնել անհրաժեշտ տեղեկատվությունը),
2) յուրացնող (ընթերցողի ջանքերն ուղղված են հնարավորինս լիարժեք հասկանալու և հիշելու ինչպես հեղինակի կողմից ներկայացված տեղեկատվությունը, այնպես էլ նրա հիմնավորման ողջ տրամաբանությունը),
3) վերլուծական-քննադատական (ընթերցողը ձգտում է քննադատաբար մոտենալ նյութին, վերլուծել և արտահայտել իր վերաբերմունքը դրա նկատմամբ),
4) ստեղծագործական (օգտագործելով հեղինակի դատողությունները, նրա մտքի ընթացքը, դիտարկումների արդյունքները, մշակած մեթոդաբանությունը, լրացնել և վերանայել այն):

Ընթերցանության մի քանի տեսակների առկայությունը կապված է գիտական տեքստի նկատմամբ տարբեր վերաբերմունքի առկայության հետ.

- մատենագիտական – նայել կատալոգային քարտերը, ցուցակները տվյալ տարվա, ամսագրերի և հոդվածների ամփոփ ցուցակները,
- դիտում - օգտագործվում է անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող նյութեր որոնելու համար, սովորաբար դրան դիմում են գրականության և գրացուցակների/կատեգորիաների հետ աշխատելուց անմիջապես հետո, նման դիտման արդյունքում ընթերցողը որոշում է, թե աղբյուրներից որն է օգտագործվելու հետագա աշխատանքի համար
- ճանաչողական – ենթադրում է ընտրված հոդվածների, գլուխների, առանձին էջերի շարունակական, բավականաչափ մանրամասն ընթերցում. նպատակն է ծանոթանալ տեղեկատվության բնույթին, պարզել, թե հեղինակը ինչ հարցեր է ներկայացրել քննարկման և տեսակավորել նյութը
- ուսումնասիրող - ենթադրում է նյութի մանրակրկիտ յուրացում, նման ընթերցման ժամանակ դրսևորվում է ընթերցողի վստահությունը հեղինակի նկատմամբ, առաջարկված տեղեկատվությունը ընդունելու պատրաստակամությունը, կողմնորոշումը դեպի նյութի առավել ամբողջական ընկալումը.
- վերլուծական-քննադատական և ստեղծագործական ընթերցանություն - ընթերցանության երկու տեսակներ մոտ են միմյանց այնքանով, որ ուղղված են հետազոտական խնդիրների լուծմանը: Դրանցից առաջինը ենթադրում է ինչպես բուն տեղեկատվության, այնպես էլ հեղինակի կողմից այն ստանալու և ներկայացնելու մեթոդների ուղղորդված քննադատական վերլուծությունը, Երկրորդը այն դատողությունների, փաստերի որոնումն է, որոնց վերաբերյալ կամ դրանց կապակցությամբ ընթերցողն անհրաժեշտ է համարում արտահայտել սեփական մտքերը:

Ընթերցանության բոլոր դիտարկված տեսակներից ուսանողների համար հիմնականը ուսումասիրողն է, որը թույլ է տալիս նրանց գիտելիքներ կուտակել տարբեր ոլորտներում ուսումնական (գիտական) գրականության հետ աշխատելիս: Այս

պատճառով էլ ընթերցանության այս տեսակն առաջին հերթին պետք է յուրացնել ուսումնական գործընթացի շրջանակներում: Բացի այդ, ընթերցանության այս տեսակը ձևավորում է այն հիմնական մեխանիզմները, որոնք բարձրացնում են գիտական տեքստերի հետ աշխատելու արդյունավետությունը:

Գրականության հետ աշխատելու գիտական մեթոդը նախատեսում է նաև կարդացածի մասին գրառումներ կատարելը: Սա թույլ է տալիս համակարգել ընթերցանության ընթացքում ձեռք բերված գիտելիքները, կենտրոնանալ հիմնական դրույթների վրա, ամրագրել, համախմբել դրանք հիշողության մեջ և, անհրաժեշտության դեպքում, կրկին անդրադառնալ դրանց:

3. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Ուշադիր կարդացեք տեքստը: Հստակեցրեք տեղեկատու գրականության մեջ առկա անծանոթ բառերի բացատրությունը: Գրառումներ կատարելիս մի մոռացեք տալ հղումներ: Կարևորեք հիմնականը, կազմեք պլան, որը կներկայացնի վերնագրերի, ենթավերնագրերի, հարցերի ցանկ, ապա հաջորդաբար կներկայացվի համառոտագրի մեջ: Սա համառոտագրի առաջին տարրն է:

Համառոտագրի երկրորդ տարրը թեզիսներն են: Թեզիսը աշխատանքի ամփոփ ներկայացումն է: Նյութն ավելի լավ յուրացնելու և մտապահելու համար պետք է սեփական բառերով գրել թեզիսները: Համառոտագրի առաջ քաշված թեզիսը պետք է նախ ապացուցվի: Ուստի համառոտագրի երրորդ տարրը դիտարկվող թեզիսի ճշմարտացիությունն ապացուցող հիմնական փաստարկներն են: Համառոտագիրը կարող է պարունակել նաև դրույթներ և օրինակներ:

Համառոտագրեք նյութը՝ հստակորեն հետևելով պլանի կետերին: Գրառումներ անելիս փորձեք ձեր մտքերն արտահայտել ձեր իսկ բառերով: Գրառումները պետք է լինեն պարզ և հստակ: Մեջբերումներն անել գրագետ: Մեջբերումներ անելիս հաշվի առնել մտքի հակիրճությունն ու նշանակությունը:

Համառոտագիր կազմելիս պետք է ձգտել յուրաքանչյուր նախադասության ճկունության: Համառոտագրի լրացուցիչ տարրերի քանակը պետք է լինի

տրամաբանորեն հիմնավորված, գրառումները պետք է բաշխվեն որոշակի հաջորդականությամբ, աշխատանքի տրամաբանական կառուցվածքին համապատասխան։

Համառոտագրումը աշխատանքի ամենաբարդ փուլն է։

Համառոտագրման ժամանակ գրքի հեղինակի մտքերը պետք է հակիրճ ներկայացնել՝ հոգալով գրվածի ոճի ու արտահայտչականության մասին։

Համառոտագրումը աշխատանքի ամենադժվար փուլն է։

Համառոտագրումներ անելու հմտություններին տիրապետելը ուսանողից պահանջում է ամենօրյա նպատակասլաց ինքնուրույն աշխատանք։

Համառոտագիրը որոշակի ընդմիջումից հետո արդեն ծանոթ աշխատանքին վերադառնալիս արագացնում է նյութի կրկնությունը, խնայում է ժամանակը կրկնելիս։

Հաշվի առնելով յուրաքանչյուր ուսանողի անհատական առանձնահատկությունները՝ կարելի է տալ միայն մի քանի, ամենահիմնավորված ընդհանուր կանոններ, որոնց հետ դասախոսը պարտավոր է ծանոթացնել ուսանողներին.

1.Համառոտագրի մեջ գլխավորը ոչ թե ծավալն է, այլ բովանդակությունը։ Այն պետք է արտացոլի սկզբնաղբյուրի հիմնական դրույթները, այն նորը, որ ներկայացրել է տվյալ հեղինակը։ Հեղինակի մտքերը կարճ, հակիրճ և սեփական բառերով արտահայտելու կարողությունը գալիս է փորձին և գիտելիքին զուգահեռ: Բայց այդ գիտելիքների ձևավորմանը նպաստում է մեկ կարևոր կանոնի պահպանում. չշտապել գրի առնել առաջին ընթերցմամբ, համառոտագրել միայն այն, ինչ պարզ է։

2. Համառոտագրերի ձևը կարող է բազմազան լինել, կարող է փոխվել, կատարելագործվել։ Բայց համառոտագիրը միշտ պետք է սկսվի ստեղծագործության ամբողջական վերնագրի, հեղինակի ազգանվան, հրապարակման տարեթվի և վայրի նշումով: Մեջբերումները պետք է վերցվեն չակերտների մեջ և պարտադիր նշվի գրքի էջի հղումը:

3. Համառոտագիրը չպետք է լինի անդեմ՝ բաղկացած շարունակական տեքստից (շարադրանքից): Հատկապես կարևոր մասերը, վառ օրինակները գունավոր ընդգծվում

են, շրջանակների մեջ են դրվում, երանգավորվում են, լուսանցքներում հատուկ նշումներ են կատարվում, որպեսզի ավելի արագ և ճիշտ գտնել նյութի ցանկացած հատված: Այլ աղբյուրներից հավելյալ նյութեր կարող են գրառվել լուսանցքներում, որտեղ կարող են նաև գրի առնվել սեփական դատողությունները, մտքերը, որոնք ի հայտ են եկել նյութը համառոտագրելուց հետո:

4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ (ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ) ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Սա արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակ է սեմինար, գործնական դասերին նախապատրաստվելու համար: Տվյալ զեկույցի տեղեկատվությունը կրում է պարզաբանող կամ ընդհանրացնող բնույթ, կրում է նորույթ, արտացոլում է ժամանակակից խնդիրների վերաբերյալ որոշակի տեսակետ:

Հաղորդումը զեկույցներից և ռեֆերատներից տարբերվում է ոչ միայն տեղեկատվության քանակով, այլև իր բնույթով. հաղորդման մեջ ուսումնասիրվող հարցը լրացվում է փաստական կամ վիճակագրական նյութերով: Առաջադրանքը հնարավոր է ներկայացնել գրավոր, այն կարող է ներառել տեսողական տարրեր (նկարազարդումներ, ցուցադրություններ):

Հաղորդումը ներկայացնելու համար տրվում է մինչև 5 րոպե ժամանակ:

Ուսանողի դերը.

- հավաքել և ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գրականությունը,
- կազմել հաղորդման պլանը կամ գրաֆիկական կառուցվածքը,
- ընդգծել հիմնական հասկացությունները,
- տեքստի մեջ մուտքագրել ուսումնասիրության առարկան բնութագրող լրացուցիչ տվյալներ,
- տեքստը ներկայացնել գրավոր (եթե անհրաժեշտ է),
- ժամանակին հանձնել դասախոսին՝ ստուգելու համար:

Գնահատման չափանիշներ.

- թեմայի արդիականությունը,
- թեմային բովանդակության համապատասխանությունը,

- նյութի խորքային ուսումնասիրությունը,
- աղբյուրների գրագետ և ամբողջական օգտագործումը,
- տեսողական տարրերի առկայությունը:

5. ՌԵՖԵՐԱՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ռեֆերատն ուսանողի ինքնուրույն աշխատանքի տեսակ է, որը պարունակում է տեղեկատվություն, որը լրացնում և զարգացնում է լսարանում ուսումնասիրվող հիմնական թեման և այն ավելի ծավալուն է, քան հաղորդումը: Առաջատար տեղը զբաղեցնում են մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող այն թեմաները, որոնք նորության տարրեր են պարունակում: Ռեֆերատը կարող է ներառել մի քանի աղբյուրների վերլուծություն և հիմք ծառայել սեմինարների, կոնֆերանսների ժամանակ կոնկրետ թեմայի վերաբերյալ զեկույցի համար:

Ռեֆերատը ներկայացնելու ժամանակը 7-10 րոպե է:

«Ռեֆերատ» բառը (լատիներեն referre հաղորդել, զեկուցել) նշանակում է ցանկացած հարցի կամ թեմայի բովանդակության բանավոր կամ գրավոր հակիրճ ներկայացում, որը հիմնված է տեղեկատվության քննադատական վերլուծության վրա:

Ռեֆերատ պատրաստելիս պետք է պահպանել հետևյալ կանոնները.

- Որոշել ռեֆերատի նպատակը: Պետք է հիշել, որ ռեֆերատը կարդալու են նաև ուրիշները: Ուստի անընդհատ ինքներդ ձեզ հարց տվեք, թե գրվածը պարզ կլինի՞ ուրիշների համար, ինչ հետաքրքիր ու նոր բաներ նրանք կգտնեն ձեր աշխատանքում:
- Հստակ ձևակերպել թեման կամ խնդիրը: Այն չպետք է շատ ընդհանուր լինի:
- Գտել համապատասխան գրականություն ընտրված թեմայի վերաբերյալ: Կազմել գրականության ցանկ, որը պետք է կարդալ:

Միայն նախնական նախապատրաստությունից հետո պետք է սկսել ռեֆերատ գրելը: Առաջին հերթին պետք է կազմել պլանը, դրա մեջ առանձնացրել մասերը:

Ներածության մեջ պետք է ներկայացվի ռեֆերատի նպատակն ու խնդիրները, տվյալ թեմայի արդիականությունն ու կարևորությունը, թեմայի ընտրության պատճառները, գրականության տեսությունը:

Հիմնական մասը. բաժինները, գլուխները, պարբերությունները պետք է ուղղված լինեն թեմայի առանցքային կետերի ուսումնասիրությանը: Ուսումնասիրված գրականության բովանդակության ներկայացումը ենթադրում է դրա քննադատական և տրամաբանական վերլուծություն:

Ռեֆերատի հիմնական մասի յուրաքանչյուր բաժին ենթադրում է թեմայի առանձին հարցի մանրամասն ուսումնասիրություն և տեքստային նյութի կառուցվածքի հետևողական ներկայացում՝ աղբյուրների պարտադիր հղումներով: Ընդհանուր առմամբ, հիմնական մասի բովանդակությունը պետք է արտացոլի առանձին հեղինակների դիրքորոշումները, այդ դիրքորոշումների համեմատական բնութագրերը՝ ընդգծելով ուսումնասիրության համար ընտրված թեմայի շուրջ դիսկուրսի հիմնական խնդիրները: Ուսանողը պետք է լավ տիրապետի հեղինակային տեքստի հիմնական հասկացություններին և կատեգորիաներին: Վերլուծված նյութի էությունը ավելի լավ ներկայացնելու համար այն կարելի է պատկերել աղյուսակներով, գրաֆիկներով, համեմատություններով, մեջբերումներով:

Եզրակացություն. Եզրակացության մեջ ռեֆերատի հեղինակը պետք է ձևակերպի անձնական դիրքորոշում ուսումնասիրված խնդրի վերաբերյալ և առաջարկի դրա լուծման սեփական ուղիները: Նպատակահարմար է թեմայի շուրջ ընդհանուր եզրակացություններ անել և ևս մեկ անգամ մատնանշել դրա արդիականությունն ու սոցիալական նշանակությունը:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ:

Ռեֆերատը կարելի է սկսել վառ, տպավորիչ փաստի հայտարարությամբ, որը պարզաբանման կարիք ունի: Այնուհետև, շարադրանքը պետք է անցնի պարզից դեպի բարդ: Մանրամասների վրա կանգ մի՛ առեք: Ռեֆերատի հիմնական պահանջը ընթերցողի համար առավելագույն օգուտն է՝ նվազագույն ինֆորմացիայով:

Ռեֆերատ գրելը ուսանողների ուսուցման ձևերից մեկն է, որն ուղղված է ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանն ու աշխատանքի ինքնուրույնության բարձրացմանը և այդ աշխատանքի նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը:

Ռեֆերատ գրելու նպատակն է ուսանողների մեջ սերմանել գրականության հետ ինքնուրույն աշխատելու հմտություններ, որպեսզի դրանց վերլուծության և ընդհանրացման հիման վրա ուսանողները կարողանան կատարել տեսական և գործնական բնույթի իրենց հիմնավորված եզրահանգումները:

Ի տարբերություն տեսական սեմինարների, որոնց ընթացքում ուսանողը ձեռք է բերում մասնավորապես իր դատողություններն արտահայտելու և այլ հեղինակների կարծիքները բանավոր ներկայացնելու հմտություններ, ռեֆերատ գրելը նրան նույնը ավելի լավ անելու հմտություններ կտա, բայց արդեն գրավոր գրագետ լեզվով ու ոճով:

Ուսումնական գործընթացում բովանդակությունից և նպատակից կախված՝ ռեֆերատները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի (տեսակի)՝ գիտ-հետազոտական և տեղեկատվական։

Գիտա-հետազոտական ռեֆերատ. Նման ռեֆերատ գրելիս ուսանողը պետք է ուսումնասիրի և համառոտ ներկայացնի տվյալ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ գրականության մեջ առկա դատողությունները, վիճահարույց խնդիրները, և ներկայացնի սեփական տեսակետն այս խնդրի վերաբերյալ՝ իր համապատասխան հիմնավորումներով։

Գրավոր ռեֆերատների հիման վրա հնարավոր է կազմակերպել ուսանողների համար «կլոր սեղաններ»: Նման դեպքերում կարող է ներկայացվել այն ուսանողի զեկույցը, որը դասավանդողի կողմից ճանաչվել է լավագույնը, որին կհաջորդի տվյալ խնդրի քննարկումը ուսանողների ողջ խմբի կողմից:

Տեղեկատվական ռեֆերատ: Նման ռեֆերատի տարատեսակները կարող են լինել.

1) որևէ գրքի, մենագրության, այլ հրապարակման (կամ դրանց մասերի) հիմնական դրույթների ամփոփում, որը որպես կանոն նոր է հրատարակված, և պարունակում է դասընթացի շրջանակում ուսումնասիրվող թեմային առնչվող նյութեր: Այն ռեֆերատները, որոնց բովանդակությունը կարող է ճանաչողական հետաքրքրություն առաջացնել այլ ուսանողների մոտ, խորհուրդ է տրվում լսել դրանց հեղինակների զեկույցները ուսումնական խմբերում:

2) տարբեր ամսագրերում կամ ժողովածուներում (գիտական աշխատություններ, գիտական նշումներ և այլն) հրապարակված կոնկրետ խնդրի (թեմայի) վերաբերյալ հոդվածների ընտրություն և բովանդակության համառոտ շարադրում:

Նման ռեֆերատը կարելի է համարել նաև ավարտական աշխատանքի սկզբնական փուլ:

Ռեֆերատի թեմաները որոշում է դասընթացը վարող դասախոսը: Գրականությունը առաջարկվում է կա՛մ դասախոսի կողմից, կա՛մ ինքնուրույն ընտրվում է ուսանողի կողմից, ինչը հանդիսանում է ինքնուրույն աշխատանքի տարրերից մեկը:

Ռեֆերատի ծավալը պետք է լինի 15-20 համակարգչային շարվածքով էջի սահմաններում: Ռեֆերատ պատրաստելիս պետք է առաջնորդվել ավարտական աշխատանքների համար սահմանված կանոններով:

Որպեսզի ուսանողը ռեֆերատ գրի և այն պաշտպանի դասախոսի կամ խմբի առջև, նա պետք է տիրապետի ռեֆերատ գրելու բոլոր կանոններին, պատրաստի բանավոր խոսք և կարողանա պատասխանել դասախոսի և ունկնդիրների ռեֆերատի թեմայի շուրջ տրվող հարցերին:

Ուսանողի դերը. նույնական է հաղորդման պատրաստման գործում ուսանողի ունեցած դերին, բայց ունի առանձնահատկություններ՝

- կապված գրականության ընտրության (հիմնական և լրացուցիչ),
- տեղեկատվության ուսումնասիրություն (հասկանալ սկզբնաղբյուրների նյութերի տրամաբանությունը, ընտրել հիմնական նյութը, կատարել եզրահանգումներ),
- ռեֆերատի ներկայացում սահմանված ձևով:

Գնահատման չափանիշներ.

- թեմայի արդիականությունը,
- թեմայի բովանդակության համապատասխանությունը,
- նյութի ուսումնասիրության խորությունը,
- աղբյուրների օգտագործման գրագիտությունը և ամբողջականությունը,

- ռեֆերատին ներկայացվող պահանջներին համապատասխանությունը:

6. ԲՆԱԳՐԻՑ (ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ, ԳՐՔԵՐ ԵՎ ԱՅԼՆ) ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ ԳՐԵԼԸ

Այն ուսանողի արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակ է, որը նպատակ ունի ավելի հակիրճ ձևով ստեղծել համառոտագրություն՝ ակնարկ՝ դասընթացի մեջ պարունակվող տեղեկատվության վերաբերյալ: Համառոտագիրը պետք է արտացոլի սկզբնաղբյուրի հիմնական դրույթները, գիտական նորույթը, որը ներկայացրել է նրա հեղինակը, աշխատանքի հիմնական մեթոդաբանական դրույթները, փաստարկները, ապացուցման փուլերը և եզրակացությունները:

Համառոտագրի արժեքը մեծապես բարձրանում է, եթե ուսանողն իր մտքերն արտահայտում է իր բառերով, հակիրճ ձևով:

Համառոտագիրը պետք է սկսվի սկզբնաղբյուրի ռեկվիզիտներով (հեղինակի անուն, ազգանունը, ստեղծագործության լրիվ անվանումը, հրապարակման վայրն ու տարեթիվը): Հատկապես կարևոր մասերը, օրինակները գունավոր ընդգծվում են, շրջանակի մեջ առնում՝ ուշադրությունը կենտրոնացնելու և դրանք ավելի լավ հիշելու համար:

Աշխատանքը կատարվում է գրավոր: Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները պետք է հնչեն կարճ բանավոր զեկույցի տեսքով (3-4 րոպե) տեսական և գործնական պարապմունքների շրջանակներում: Վերահսկողությունը կարող է իրականացվել նաև դասախոսի համառոտագրությունների ստուգման ձևով:

Ուսանողի դերը.

- կարդալ սկզբնաղբյուրը, ընտրել հիմնականը և երկրորդականը,
- ստեղծել տրամաբանական կապեր թեմայի տարրերի միջև,
- գրել միայն այն, ինչ լավ է ընկալվել,
- ընդգծել բանալի բառերն ու հասկացությունները,
- փոխարինել տեքստի բարդ շրջադարձերը ավելի հակիրճ բառերով,
- մշակել և կիրառել պայմանական հապավումների սեփական համակարգը:

Գնահատման չափանիշներ.

- համառոտագրի բովանդակության համապատասխանությունը պլանին,
- հիմնական դրույթների արտացոլումը, հեղինակի աշխատանքի արդյունքները, եզրակացությունները.
- պարզությունը, ուսանողի մտքերի ներկայացման հակիրճությունը,
- սխեմաների առկայությունը, հատկապես կարևոր տեղեկատվության գրաֆիկական ընդգծումը,
- ձևակերպման պահանջներին համապատասխանությունը,
- ներկայացման գրագիտությունը,
- ժամանակին ներկայացնելը:

7. ԷՍՍԵԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Էսսեն ուսանողների արտալսարանային ինքնուրույն գրավոր աշխատանքի տեսակ է. որևէ թեմայի վերաբերյալ կարճ և ազատ շարադրանք, որը մեկնաբանվում է սուբյեկտիվ և սովորաբար թերի: Էսսեի թեման պետք է լինի արդիական՝ ընդգրկելով դասընթացի ուսումնասիրության ոլորտում առկա խնդիրները: Ուսանողը պետք է բացահայտի ոչ միայն խնդրի էությունը, բերի տարբեր տեսակետներ, այլև արտահայտի իր սեփական տեսակետը դրանց վերաբերյալ: Աշխատանքի այս տեսակը պահանջում է, որ ուսանողը կարողանա հստակ արտահայտել իր տեսակետը, շարադրել իր մտքերը գրավոր՝ տրամաբանական դատողությունների միջոցով:

Էսսեն, որպես կանոն, խնդիր ունի լուծելու դասընթացի կրթական կամ գիտական հետաքրքրությունների ոլորտին առնչվող խնդիրներից մեկը, որի հիման վրա ուսանողն ինքն է ձևակերպում թեման: Թեման ուսումնասիրելիս նա պետք է ցույց տա խնդրի լուծման մոտեցման ինքնատիպությունը, առաջարկվող գաղափարների իրատեսությունը, օգտակարությունն ու նշանակությունը, պատկերավորությունը, ներկայացման գեղարվեստական ինքնատիպությունը:

Էսսեն կարող է ներկայացվել գործնական պարապմունքներին, ուսանողական աշխատանքների մրցույթներին, գիտաժողովներին:

Ուսանողի դերը.

- ուշադիր կարդալ առաջադրանքը և ձևակերպել ոչ միայն արդիական, այլ նաև օրիգինալ և հետաքրքիր բովանդակությամբ թեմա,
- ընտրել և ուսումնասիրել թեմայի վերաբերյալ աղբյուրները, դրանցում պարունակվող տեղեկատվությունը,
- ընտրել հիմնականը և երկրորդականը,
- կազմել էսսեի պլան,
- հակիրճ, բայց տարողունակ բացահայտել խնդրի բովանդակությունը և դրա լուծման իր մոտեցումները,
- պատրաստել և ներկայացնել էսսեն ժամանակին:

Գնահատման չափանիշներ.

- նորույթը, գաղափարի ինքնատիպությունը և սեփական մոտեցումը,
- առաջարկվող գաղափարի օգտակարությունն ու իրատեսությունը,
- այս գաղափարի իրականացման նշանակությունը, ընդգրկման լայնությունը,
- գեղարվեստական արտահայտչականությունը, ներկայացման ձևը,
- ներկայացման գրագիտությունը,
- ժամանակին ներկայացնելը:

8. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ /ԿԱՐԾԻՔ ԳՐԵԼԸ

Այն ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակ է, որը սկզբնաղբյուրի վերաբերյալ (գիրք, հոդված, էսսե և այլն) քննադատականակնարկ է: Գրախոսության մեջ ուսանողը պետք է անպայման ցույց տա հետազոտության այն ոլորտը, որին նվիրված է աշխատանքը, դրա տարբերակիչ առանձնահատկությունները առկա նմանատիպ հրապարակումներից, աշխատանքի դրական կողմերն ու թերությունները, հեղինակի ներդրումը ուսումնասիրվող խնդիրների զարգացման գործում, գաղափարների ինքնատիպությունը, մոտեցումները, շարադրման ոճը: Կատարված աշխատանքը կարող է ներկայացվել գործնական պարապմունքին կամ ստուգվել դասախոսի կողմից:

Ուսանողի դերը

- ուշադիր ուսումնասիրել տեղեկատվությունը,
- կազմել գրախոսության պլանը,
- քննադատական գնահատական տալ գրախոսվող տեղեկատվությանը,
- ձևավորել կարծիքը և ներկայացրել այն սահմանված ժամկետում:

Գնահատման չափանիշներ.

- գրախոսության բովանդակալից լինելը,
- ուսանողի անձնական կարծիքի արտահայտումը գրախոսվող աղբյուրի վերաբերյալ,
- ձևավորման պայմանների համապատասխանությունը,
- շարադրման և ներկայացման գրագիտությունը,
- գրախոսությունը ժամանակին ներկայացնելը:

9. ԱՆՈՏԱՑԻԱՆԵՐ ԳՐԵԼԸ ԿԱՄ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սա ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակ է գրքի, հոդվածի, ձեռագրի համառոտ նկարագրություն գրելու վերաբերյալ: Այստեղ ներկայացվում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, տեղեկատվություն է տրամադրվում լսարանի մասին, որի համար այն նախատեսված է: Անոտացիաներ կազմելու աշխատանքը օգնում է կողմնորոշվել նույն թեմայով մի շարք աղբյուրներում, ինչպես նաև պատրաստել գրականության ակնարկ:

Ուսանողը պետք է թվարկի հեղինակի բարձրացրած հիմնական մտքերը, խնդիրները, նրա եզրակացությունները, առաջարկությունները, որոշի տեքստի նշանակությունը:

Անոտացիան կարող է ներկայացվել գործնական պարապմունքին կամ ստուգվել դասախոսի կողմից:

Ուսանողի դերը.

- ուշադիր ուսումնասիրել տեղեկատվությունը,
- կազմել անոտացիայի պլան,

- համառոտ ցույց տալ ծանոթագրված տեղեկատվության հիմնական բովանդակությունը,
- պատրաստել անոտացիան և ներկայացնել այն սահմանված ժամկետում:

Գնահատման չափանիշներ՝

- անոտացիայի բովանդակությունը,
- սկզբնաղբյուրի հիմնական դրույթների ճշգրիտ փոխանցումը,
- ձևավորման պայմանների համապատասխանությունը,
- ներկայացման գրագիտությունը,
- անոտացիան ժամանակին ներկայացնելը:

10. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼԸ

Այն ուսանողի արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակ է, որը իրենից ներկայացնում է դասախոսության կամ գրքի վերաբերյալ համառոտ տեղեկատվության ստեղծումն է, որն ամփոփում և արտացոլում է դասախոսությունների և դասագրքերում առկա նյութի էությունը: Հիմնական համառոտագրությունը նախատեսված է ընդգծելու ուսումնասիրության հիմնական օբյեկտները, նրանց տալ համառոտ նկարագրություն՝ օգտագործելով սիմվոլներ, արտացոլել կապը այլ տարրերի հետ:

Համառոտագրության նպատակն է հեշտացնել մտապահումը: Դրա կազմման ժամանակ օգտագործվում են տարբեր հասկացություններ, տերմիններ, նշաններ, հղումներ: Համառոտագրությունը դասապրոցեսին պատրաստվելու և դասերը ներկայացնելու լավագույն ձևերից մեկն է: Թեմաների համար համառոտագրություն կազմելը հատկապես արդյունավետ է այն ուսանողների համար, ովքեր դասերին նախապատրաստվելիս բախվում են ծավալով մեծ տեղեկատվության հետ և չունենալով հիմնականը երկրորդականից տարանջատելու, հիմնականը ընդգծելու հմտություններ, դժվարանում են այն հիշել: Համառոտագրությունը կարող է ներկայացվել փոխկապակցված երկրաչափական ձևերի համակարգով, որը պարունակում է կենտրոնացված տեղեկատվության բլոկներ տրամաբանական սանդուղքի քայլերի

տեսքով, լրացուցիչ տարրերով նկարչություն: Թեմայի վերաբերյալ համառոտագրություն կազմելու առաջադրանքը կարող է լինել և՛ պարտադիր, և՛ լրացուցիչ:

Հարցման ընթացքում կարող են ստուգվել ուսանողի պատասխանի որակի կամ այլ ուսանողների կողմից դրա կիրառման արդյունավետության վերաբերյալ նշումները, կամ սեմինարների շրջանակներում կարող է անցկացվել նշումների միկրոմրցույթ, հետևյալ սկզբունքներով, թե որն է դրանցից ավելի հակիրճ, բայց տարողունակ և բովանդակալից:

Ուսանողի դերը.

- ուսումնասիրել թեմայի նյութերը, տարանջատել հիմնականը և երկրորդականը,
- ստեղծել տրամաբանական կապեր թեմայի տարրերի միջև,
- հակիրճ ներկայացնել տարրերի բնութագրերը,
- ընտրել համառոտագրման ձևը՝ հիմնական տեղեկատվությունը ընդգծելու և աշխատանքի կառուցվածքում ցուցադրելու համար,
- ավարտել աշխատանքը և ներկայացնել այն ժամանակին,

Գնահատման չափանիշներ՝

- թեմայի բովանդակությանը համապատասխանությունը,
- տեղեկատվության ճիշտ կառուցումը,
- ներկայացված տեղեկատվության տրամաբանական կապի առկայությունը,
- ձևավորման պայմաններին համապատասխանությունը,
- ներկայացման ճշգրտությունը և գրագիտությունը,
- աշխատանքները ժամանակին ներկայացնելը:

11. ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Ուսանողի ինքնուրույն աշխատանքի տեսակ, որն իրականացվում է թեմայի ուսումնասիրության ժամանակ հանդիպող տերմինների, անհասկանալի բառերի և արտահայտությունների ընտրությամբ և համակարգմամբ: Ինքնուրույն աշխատանքի

այս ձևը ուսանողի մոտ զարգացնում է թեմայի հիմնական հասկացությունները ընդգծելու և դրանք ձևակերպելու կարողություն:

Այն կազմվում է գրավոր, այբբենական կարգով, ներառում է տերմինների, բառերի և հասկացությունների անվանումն ու նշանակությունը:

Ուսանողի դերը՝

- կարդալ սկզբնաղբյուրը, ընտրել հիմնական տերմինները, անհասկանալի բառերը,
- գրել հասկացությունների հիմնական սահմանումները կամ վերծանումը,
- քննադատաբար անդրադառնալ ընտրված սահմանումներին և փորձել փոփոխել դրանք (պարզեցնել ավելորդությունը և կրկնությունը վերացնելու առումով).
- ավարտել աշխատանքը և ներկայացնել այն մինչև սահմանված ժամկետը:

Գնահատման չափանիշներ՝

- տերմինների համապատասխանությունը թեմային,
- տերմինների բազմակողմ մեկնաբանությունը և դրանց մեկնաբանության կոնկրետացումը՝ համաձայն ուսումնասիրող դասընթացի առանձնահատկություններին,
- ձևավորման պայմաններին համապատասխանությունը,
- աշխատանքի ժամկետների համապատասխան ներկայացնելը:

12. ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԿԱԶՄՈՒՄ

Սա ուսանողի ինքնուրույն աշխատանքի տեսակ է ծավալուն տեղեկատվության համակարգման համար, որը ընդհանրացվում է աղյուսակի շրջանակներում:

Աղյուսակի կառուցվածքի ձևավորումը արտացոլում է ուսանողի նյութը համակարգելու կարողությունը և զարգացնում է տեղեկատվության կառուցման նրա հմտությունները:

Աղյուսակի շրջանակներում տեսողական ձևով ցուցադրվում են թե՛ մեկ թեմայի բաժինները (միակողմանի նյութ) և թե՛ տարբեր թեմաների բաժինները (բազմապլան նյութ)։ Նման աղյուսակները ստեղծվում են որպես օգնություն մեծ քանակությամբ տեղեկատվության ուսումնասիրության համար՝ ցանկանալով դրան տալ հիշելու լավագույն ձևը: Առաջադրանքների այս ձևը հաճախ կրում է պարտադիր բնույթ, իսկ դրա որակը գնահատվում է գիտելքների ստուգման գործընթացում: Նմանատիպ առաջադրանքները ներկայացվում են գրավոր:

Ուսանողի դերը.

- ուսումնասիրել թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը,
- ընտրել աղյուսակի արդյունավետ ձևը,
- ներկայացնել տեղեկատվությունը հակիրճ ձևով և դրանով լրացնել աղյուսակի հիմնական սյունակները.
- օգտագործելով պատրաստի աղյուսակը՝ արդյունավետորեն պատրաստվել տվյալ թեմայի գնահատմանը:

Գնահատման չափանիշներ՝

- բովանդակության համապատասխանությունը թեմային,
- աղյուսակների տրամաբանական կառույցը,
- տեղեկատվության ճիշտ ընտրությունը,
- աղյուսակի կառուցվածքին ներկայացվող պահանջների պահպանումը,
- տեղեկատվության ներկայացման ընդհանրացնող (համակարգող, կառուցվածքային, համեմատական) բնույթի առկայությունը,
- աշխատանքները ժամանակին ներկայացնելը:

13. ԳՈՐԾՆԱԿԱՆ/ԲԻԶՆԵՍ ԽԱՂԵՐ

Ուսանողական գործնական /բիզնես խաղերի անցկացման հիմնական նպատակն է ուսանողների մեջ սերմանել հատուկ խնդիրներ լուծելու հմտություններ և գործնական փորձ ձեռք բերել ընթացակարգային խնդիրների լուծման գործում՝ հիմնված

կոնկրետ բիզնես իրավիճակների ստեղծման վրա, որոնք հնարավորինս մոտ են իրական կյանքի պայմաններին:

Բիզնես խաղը ներառում է խմբում առավելագույն թվով ուսանողների մասնակցություն և նրանց միջև որոշակի դերերի բաշխում:

Բիզնես խաղի անցկացման ժամանակ դերային առումով չափազանց մեծ է դասավանդողի դերը, մասնակցությունը, ինչպես բիզնես խաղի նախապատրաստման, այնպես էլ բուն խաղի ժամանակ, որը արտահայտվում է հետևյալում.

- ուսանողների դերի որոշում և նշանակում՝ ըստ ուսանողների ցանկության,
- համապատասխան դերի ճիշտ կատարման համար՝ անհրաժեշտ մեթոդական և նորամատիվային աջակցության ցուցաբերում,
- բիզնես խաղի ժամանակ ուսանողի դերի վերլուծություն,
- ուսանողների ուշադրության հրավիրումը՝ խաղի ժամանակ ունեցած բացթողումների վրա:

Վերջում դասավանողը պարտավոր է ամփոփել բիզնես խաղի արդյունքները:

14. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ

Ուսանողական գիտական ժողովներին մասնակցելը նպատակ ունի ուսանողին հնարավորություն տալ ձեռք բերելու գիտական աշխատանքի հմտություններ, հրապարակայնորեն արտահայտելու իր տեսական եզրակացությունները, եզրահանգումները՝ հիմնված տարբեր հեղինակների գիտական և տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքների խոր ուսումնասիրության և ընդհանրացման, ինչպես նաև կարգավորող նյութերի և պրակտիկայի վերլուծության վրա։

Ուսանողների մասնակցությունը նման գիտաժողովներին չի ենթադրում զանգվածային բնույթ: Ուսանողների ներգրավվածության ինքնուրույն աշխատանքի այս ձևում իրականացվում է ուսանողական աշխատանքների՝ ռեֆերատ, հետազոտական, ավարտական, խմբում լավագույն ճանաչելու հիման վրա:

Գիտաժողովների զեկույցի հիմքում անշուշտ տարբեր ռեֆերատների, հետազոտական և ավարտական աշխատանքների նյութերն են, բայց քանի որ զեկույցը շարադրանքի բանավոր ներկայացումն է, այն չի կարող վերածվել այդ աշխատանքների վերապատմության: Բացի այդ, պետք է ի նկատի ունենալ, որ գիտաժողովների ժամանակ զեկուցման ժամանակը խիստ սահմանափակ է (ոչ ավել քան 10-15 րոպե), ուստի նախապես ուղարկված նյութերը միշտ ներկայացնում են միայն զեկույցի հիմքը, բայց ոչ նրա բովանդակությունը:

Գիտաժողովների զեկույց ներկայացնել ենթադրում է նյութերի մանրակրկիտ ընտրություն՝ ըստ նրանց արդիականության, տարակարծությունների կամ նորույթի և գիտական ոլորտում թերի ուսումնասիրվածության:

Այս առումով, ուսանողի զեկույցից հետո, երբ ունկնդիրների ուշադրությունը հրավիրվում է խնդրի արդիականության վրա, հաջորդիվ պետք է ներկայացվեն գիտական բնույթի դրույթներ, որոնք հաստատված են գիտական գրականության մեջ արտահայտված տեսակետների վերլուծությամբ: Զեկույցում գիտական բնույթի դրույթները պետք է լինեն ճիշտ և ապացուցելի (հաստատուն):

Ուսանողական գիտական կոնֆերանսերում զեկուցող ուսանողը պետք է պատրաստ լինի այն հարցերին, որոնք իրեն կտան ունկնդիրները, ինչը անհրաժեշտ է դարձնում զեկույցին պատրաստվելիս ուշադիր դիտարկել դրանում արտահայտված դիրքորոշումների համար լրացուցիչ փաստարկները:

Զեկույցի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ուսանողի առջև խնդիր է դրված ցուցադրել իր հռետորությունը, 7-10 րոպեում ուսումնասիրած նյութերի հիմնական դրույթները համառոտ ներկայացնելու և տրվող հարցերին պատասխանելու կարողությունը:

Զեկույցի պատրաստվելու և ներկայացնելու գործընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին պատրաստել ցուցադրական նյութեր, որոնք կցուցադրեն տեսողական նյութերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու իր կարողությունները:

Զեկույցը՝ որպես խմբի հետ շփման ազատ ձև հնարավորություն է տալիս ուսանողին մտածելու խմբի հետ հետադարձ կապի ստեղծման մասին, հարցեր տալու, խնդրել խմբի ուսանողներին արտահայտելու իրենց կարծիքը զեկույցի թեմայի մասին, փոքր քննարկումներ կազմակերպելու:

15. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ, ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Տվյալ առաջադրանքների կատարումը ուսանողներից պահանջում է զարգացած քննադատական մտածողություն՝ տեղեկատվությունն ընկալելու, այն գլխավոր և երկրորդական տարրերի բաժանելու համար, ինչպես նաև լակոնիկ ձևով մտքերը ձևավորելու և այն հարցի ձևով ներկայացնելու կարողություն:

Բացի այդ, ուսանողի կողմից մշակված հոգեախտորոշիչ գործիքների օգտագործումը պահանջում է ունենալ հաղորդակցման, ընկալման և ինտերակտիվ հմտություններ:

Հարցաթերթը բանավոր (կամ գրավոր, կամ առցանց) հաղորդակցման հիման վրա առաջնային սոցիալ-հոգեբանական տեղեկատվության ստացման մեթոդաբանական գործիք է և իրենից ներկայանցում է հարցերի կազմ՝ նախապես կազմված հարցերին պատասխանելու համար:

Հարցազրույցը սոցիալական հոգեբանության մեթոդներից մեկն է, որը պարունակում է տեղեկատվություն՝ նախապես ձևակերպված հարցերի պատասխանների տեսքով:

Զրույցը մեթոդ է, որը ապահովում է հոգեբանական տեղեկատվության ուղղակի կամ անուղղակի ստացում բանավոր հաղորդակցության միջոցով: Առաջադրանքը պետք է պարունակի ոչ պակաս քան 10 հարց:

Առաջադրանքը կարող է պլանավորվել մեկ թեմայի ուսումնասիրության շրջանակում կամ գիտահետազոտական ուսումնասիրության ժամանակ:

Ուսանողը պարտավոր է.

- ուսումնասիրել թեմայի մասին եղած տեղեկատվությունը,

- մշակել հարցաթերթիկը, կազմակերպել հարզազրույց կամ զրույց,
- կատարել առաջադրանքը և այն ներկայացնել ժամանակին:

Գնահատման չափանիշները.

- հարցերի համապատասխանությունը թեմային,
- բոլոր հարցերի լուսաբանումը,
- հարցերի կոռեկտ և ճիշտ ձևակերպումը,
- պահանջների կատարման համապատասխանությունը,
- աշխատանքի ժամանակին ներկայացնելը

16. ՏԵՍԱՍԱՀԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սա ուսանողների ինքնուրույն աշխատանքի՝ տեսողական-ցուցադրական առաջադրանքի ձև է, որն իրականացվում է PowerPoint համակարգչային ծրագրի միջոցով: Աշխատանքի այս տեսակը պահանջում է ուսանողի նյութերի հավաքագրման հմտությունների համակարգում, տեղեկատվության համակարգում, մշակում, ուսումնասիրվող նյութի համառոտ ներկայացում՝ էլեկտրոնային ձևով: Այսինքն՝ ցուցադրվող նյութերի ստեղծումը ընդլայնում է ուսումնական տեղեկատվության մշակման և ներկայացման մեթոդներն ու միջոցները, ձևավորում ուսանողների համակարգչային կարողությունները:

Ներկայացման նյութերը ուսանողը պատրաստում է սլայդների տեսքով՝ օգտագործելով PowerPoint ծրագիրը: Որպես պրեզենտացիայի նյութեր կարող են ներկայացվել ցանկացած տիպի արտալսարանային ինքնուրույն աշխատանքների արդյունքները՝ ներկայացման ռեժիմին համապատասխան ձևաչափով:

Առաջադրանքի ձևերից մեկը կարող է լինել ռեֆերատ-ներկայացումը: Ինքնուրույն աշխատանքի կատարման այս ձևը տարբերվում է շարադրություն կամ զեկույց գրելուց նրանով, որ ուսանողը իր հետազոտությունների արդյունքները ներկայացնում է պրեզենտացիայի տեսքով: Ուսանողը մի շարք սլայդների միջոցով փոխանցում է իր հետազոտական թեմայի բովանդակությունը, դրա հիմնական խնդիրն ու նշանակությունը: Սլայդները թույլ են տալիս զգալիորեն կառուցապատել նյութի

բովանդակությունը և միևնույն ժամանակ կենտրոնանալ դրա ներկայացման տրամաբանության վրա: Պրեզենտացիայի ժամանակ սահմանվում են նպատակներն ու խնդիրները և ձևակերպվում են դրանց լուծման հավանական մոտեցումները:

Պրեզենտացիայի սլայդները պետք է պարունակեն ներկայացվող նյութի տրամաբանական կառուցվածքը: Աշխատանքը կատարելիս ուսանողը կարող է օգտագործել քարտեզներ, գծապատկերներ, ձայնային ուղեկցություն, լուսանկարներ, գրաֆիկներ, սխեմաներ և այլն: Յուրաքանչյուր սլայդ պետք է լինի ծանոթագրված, այսինքն՝ այն պետք է ուղեկցվի համառոտ բացատրությամբ, թե ինչ է պատկերում: Շնորհանդեսի ընթացքում ուսանողը հնարավորություն ունի մեկնաբանություններ անելու՝ բանավոր լրացնել սլայդների նյութը: Ռեֆերատի շնորհանդեսից հետո ուսանողը պետք է անձնական գնահատական տա ուսումնասիրված խնդրին և պատասխանի տրվող հարցերին:

Ուսանողի դերը.

- ուսումնասիրել թեմայի վերաբերող նյութերը՝ առանձնացնելով հիմնականն ու երկրորդականը,
- ստեղծել տրամաբանական կապ թեմայի տարրերի միջև,
- համառոտ ներկայացնել տարրերի բնութագրերը,
- ընտրել հոման ազդանշանները՝ հիմնական տեղեկատվությունն ընդգծելու և աշխատանքի կառուցվածքում ցուցադրելու համար
- ավարտել աշխատանքը և ներկայացնել այն ժամանակին:

Գնահատման չափանիշներ.

- թեմայի բովանդակության համապատասխանությունը,
- տեղեկատվության ճիշտ կառուցվածքը,
- ներկայացված տեղեկատվության տրամաբանական կապի առկայությունը,
- գեղեցիկ դիզայնը կառուցվածքը՝ պահանջներին համապատասխան,
- աշխատանքի ժամանակին ներկայացնելը:

17. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Աշխատանքի այս ձևը ենթադրում է խնդրի ինքնուրույն ձևակերպում և լուծում կամ բարդ խնդրի լուծում՝ դասախոսի անմիջական ղեկավարությամբ, որպեսզի ապահովեն արդյունավետ ստեղծագործական արդյունքներ և ձևավորեն արդյունավետ և պրակտիկ գիտելիքներ (գիտելիք-փոխակերպումներ): Այս առաջադրանքները կարող են կատարվել դասընթացի շրջանակներում ձևավորված խմբակների ժամանակ կամ պլանավորվել անհատական ձևով և պահանջում են համապատասխան պատրաստվածություն և մեթոդական ապահովվածություն: Դասախոսի և ուսանողի դերը այս դեպքում բավականին բարդանում է, քանի որ այդ առաջադրանքների նպատակը ուսանողի մոտ հետազոտական և գիտական մտածողության և հմտությունների ձևավորումն է: Նման առաջադրանքները ոչ բոլոր ուսանողները կարող են կատարել, դրանք պլանավորելիս պետք է հաշվի առնել ուսանողների անհատական ընդունակությունները: Առավել բարդ է նման առաջադրանքների իրականացման համակարգումը, ավելի տարողունակ է և՛ ուսանողի, և՛ դասախոսի ծախսած ժամանակը: Այս առաջադրանքի սահմանում պետք է լինի բարդ ռեֆերատներ, փոքր հետազոտությունները, պատրաստված բարդ ուսումնական մոդելները:

18. ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽԱՉԲԱՌԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Ինքնուրույն աշխատանքի այս տեսակը տեղակատվության գրաֆիկական ձևով ցուցադրելու յուրահատուկ ձև է և դրա միջոցով գիտելիքների վերահսկման միջոց: Խաչբառ կազմելը պահանջում է ուսանողից նյութի տիրապետում, մտքերի կենտրոնացման կարողություն և մտքի ճկունություն: Խաչբառերի լուծումը ավելի հաճախ օգտագործվում է լսարանային ինքնուրույն աշխատանքում՝ որպես սեփական գիտելիքների ստուգման և գիտելիքների փոխադարձ վերահսկման մեթոդ: Խաչբառների կազմումը համարվում է արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակ և ուսանողի պահանջում է ոչ միայն այն նույն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են խաչբառների լուծման համար, այլ նաև տեղեկատվության համակարգման կարողություն:

Ուսանողի դերն է.

- սովորել թեմայի վերաբերյալ եղած նյութը,
- ստեղծել գրաֆիկական պատկերը, կազմել հարցերը և նրանց պատասխանները,
- ժամանակին ներկայացնել աշխատանքը:

Գնահատման չափանիշներն են.

- թեմայի բովանդակության համապատասխանությունը,
- հարցերի գրագետ ձևակերպումը,
- խաչբառը լրացված է առանց սխալների,
- աշխատանքը ներկայացված է ժամանակին:

19. ԴԻԱԳՐԱՄՆԵՐԻ, ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԻ (ԳԾԱԳՐԵՐԻ), ԳՐԱՖԻԿՆԵՐԻ, ԴԻԱԳՐԱՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Սա տեղեկատվության ցուցադրման ամենապարզ գրաֆիկական միջոց է: Այս աշխատանքի նպատակն է զարգացնել ուսանողի՝ հիմնական տարրերը բացահայտելու, դրանց միջև հարաբերություններ հաստատելու, դրանց զարգացման ընթացքին հետևելու կարողությունը: Երկրորդական բնույթի՝ նկարագրողական բնույթի մանրամասնությունները բացակայում են: Նկարները, գծագրերը հաճախ կառուցվածքային են: Նրանք ընդգծում են և նշում են ընդհանուր տարրերը, դրանց տեղագրական հարաբերությունները: Գծանկարը կարող է լինել գործողության ցուցադրում, որը նպաստում է ալգորիթմի դիտողականությանը և ավելի լավ մտապահմանը: Գծապատկերները, դիագրամները և գծագրերը հաճախ օգտագործում են գործնական պարապմունքների առաջադրանքներում և ինքնուրույն աշխատանքների ժամանակ: Այս առաջադրանքները կարող են տրվել բոլոր ուսանողների որպես պարտադիր աշխատանք՝ գործնական պարապմունքներին նախապատրաստվելու համար:

Ուսանողի դերը.

- սովորել թեմային վերաբերող տեղեկատվությունը,

- ստեղծել թեմատիկ սխեմա, ցուցադրություն, գրաֆիկա, դիագրամներ,
- ներկայացնել ստուգման նախանշված ժամկետներում:

Գնահատման չափանիշները

- թեմային համապատասխանությունը,
- տեղեկատվության ճիշտ կառուցումը,
- շարադրված նյութի տրամաբանական կապի առկայությունը,
- կատարված աշխատանքի կոկիկությունը
- առաջադրանքի կատարման ժամանակ ցուցաբերած ստեղծագործական մոտեցումը,
- աշխատանքը տրված է ժամանակին:

20. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ (ԴԵՊՔԵՐԻ) ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

Սա ուսանողի ինքնուրույն աշխատանքի տեսակ է, որի ժամանակ ուսանողը համակարգում է կոնկրետ խնդիրների առաջադրման կամ լուծման շրջանակներում տեղեկատվությունը: Իրավիճակային խնդիրների լուծումը ավելի հեշտ է, քան դրանք ստեղծելը: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ դեպքերում պահանջվում է բուն խնդրի մտավոր ինքնուրույն որոնում և լուծում: Ինքնուրույն աշխատանքի այս տեսակը ուղղված է մտածողության, ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ակտիվ որոնման ընթացքում ձեռք բերված գիտելիքների յուրացմանը և խնդիրների ինքնուրույն լուծմանը:

Պետք է նշել, որ նման գիտելիքները ավելի ամուր են, հիմնավոր են, նրանք թույլ են տալիս ուսանողին տեսնել, դնել և լուծել ինչպես ստանդարտ, այնպես էլ ոչ ստանդարտ առաջադրանքներ, որոնք կարող են առաջանալ հետագա մասնագիտական գործունեության ժամանակ:

Հորինելով խնդրահարույց հարցերի համակարգ՝ ուսանողը պետք է հիմնվի տվյալ առարկայի տվյալների բազայի վրա, բայց չպետք է կրկնի այն հարցերը, որոնք արդեն կան նախորդ հանձնարարականներում: Խնդրահարույց հարցերը պետք է արտացոլեն ինտելեկտուալ դժվարությունները և առաջացնեն նպատակային մտավոր

որոնում: Իրավիճակային խնդիրների լուծումները պատկանում են մասնակի որոնման մեթոդին և ներառում են գիտելիքների երրորդ (կիրառական) և չորրորդ (ստեղծագործական) մակարդակները:

Իրավիճակային առաջադրանքների համար ընտրված խնդրի առանձնահատկությունները և դրա լուծման ուղիները ելակետ են այս տեսակի աշխատանքի որակի գնահատման համար: Ուսուցման դինամիկայի մեջ խնդիրները բարդանում են: Առաջադրանքերը և դրանց պատասխանների չափորոշիչները կազմվում են գրավոր:

Ուսանողի դերը

- սովորել թեմայի վերաբերյալ ուսումնական նյութը,
- իրականացնել թեմայի բովանդակության համակարգված կառուցվածքային վերլուծություն,
- ընդգծել ինտելեկտուալ դժվարություն ունեցող խնդիրը, համաձայնեցնել այն դասախոսի հետ,
- տալ խնդրի պայմանների մանրամասն նկարագրությունը,
- քննադաբար մտածել տարբերակների մասին և փորձել փոփոխել դրանք՝ ավելորդությունների պարզեցման առումով,
- ընտրել լավագույն տարբերակը (ընտրել գործողության հայտնի և ստանդարտ ալգորիթմները) կամ խնդրի լուծման տարբերակները (եթե դա ստանդարտ չի),
- լրացնել և ներկայացնել սահմանված ժամկետում:

Գնահատման չափանիշները

- առաջադրանքների բովանդակությունը խնդրահարույց է,
- խնդրի լուծումը ճիշտ է, ցույց է տալիս վերլուծական և ստեղծագործական մոտեցումների կիրառումը
- ցուցադրված է անորոշության և ոչ միանշանակ պայմաններում, իրավիճակներում աշխատելու կարողությունը,
- առաջադրանը ժամանակին է ներկայացված ստուգման:

21. ԹԵՍՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Սա ինքնուրույն աշխատանքի տեսակ է, որն ուղղված է սովորած նյութի, տեղեկատվության ամրապնդմանը՝ դրա տարբերակման, կոնկրետացման, համեմատության և մասնավորեցման ճանապարհով՝ վերահսկման, ստուգման ձևով՝ հարց-պատասխան: Ուսանողը պետք է կազմի ինչպես թեստերը, այնպես էլ նրա պատասխանները: Թեստերը կարող են լինել տարբեր բարդության, նպատակահարմար է այս հարցում ուսանողին տրամադրել ընտրության ազատություն, կարևորն այն է, որ դրանք լինեն թեմայի շրջանակներում:

Թեստերի (հարցերի միավորները) քանակը կարող է հստակ որոշվել կամ տրվել կամ տրվել կամայական: Թեստերի որակի հսկողությունը կարելի է դնել քննարկման գործնական պարապմունքների ժամանակ («Ով է դրանք ավելի շատ պատրաստել», «Ում թեստերն են ավելի ճշգրիտ, ավելի հետաքրքիր» և այլն): Ցանկալի է, որ դրանց որակի գնահատումը ևս իրականացվի դասաժամին:

Առաջադրանքները ձևավորվում են գրավոր:

Ուսանողի դերը.

- ուսումնասիրել թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը,
- իրականացնել համակարգային վերլուծություն,
- ստեղծել թեստեր,
- ստեղծել թեստերի պատասխանները,
- ստուգման ներկայացնել սահմանված ժամկետում:

Գնահատման չափանիշները

- թեստային առաջադրանքների բովանդակության համապատասխանությունը թեմային
- թեստային առաջադրանքներում ամենակարևոր տեղեկատվության ներառումը,
- բազմազան ու բազմապիսի թեստերի առկայություն՝ ըստ տարբեր բարդության,
- ճիշտ պատասխանների առկայությունը,

- թեստերը ժամանակին ներկայացվել են ստուգման:

22. ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սա ուսանողի ինքնուրույն աշխատանքի շատ արդյունավետ տեսակ է, որը հնարավորություն է տալիս տրամաբանական սխեմայի շրջանակներում համակարգել տեղեկատվությունը՝ տեսողական գրաֆիկական ներկայացմամբ: Գրաֆիկական կառուցվածքը՝ որպես տեղեկատվության համակարգման միջոց, հստակ և տեսողական ներկայացնում է նյութի բովանդակությունը:

Նույնիսկ ամենապարզ տրամաբանական կառուցվածքի ստեղծումը նպաստում է ուսանողների համակարգային վերլուծության մեթոդների, ընդհանուր տարրերի ընդգծման և լրացուցիչ տարերի ամրագրմանը, ունակությունների զարգացմանը:

Ի տարբերություն տեղեկատվության գրաֆիկական ցուցադրման այլ եղանակների (աղյուսակներ, նկարներ, դիագրամներ), գրաֆիկական կառուցվածքը կենտրոնանում է միմյանց միջև տարրերի տրամաբանական կապի վրա, գրաֆիկան հանդես է գալիս որպես արտահայտման միջոց (տեսանելիություն):

Նման կառույց ստեղծելու աշխատանքները փուլային են: Դուք կարող եք կառուցապատել ինչպես ուսումնական նյութի ամբողջ ծավալը, այնպես էլ դրա առանձին մասերը: Նման աշխատանքը ընդունելի է, երբ ուսանողները դասընթացի վերաբերյալ ունեն բավարար բազա: Ուսանողը կարող է ստեղծել ամենապարզ տրամաբանական սխեմաներ, որոնք կարող են տեսողական ձևով արտացոլել ուսումնասիրվող օբյեկտի կառուցվածքը և նրա գործառույթը: Ամեն ինչ կախված է նյութի առանձնահատկություններից և ուսանողի կողմից տեղեկատվությունը ընդհանրացնելու կամ առանձնացնելու կարողությունից: Աշխատանքը ներկայացվում է գրաֆիկական ձևով:

Ուսանողի դերը.

- ուսումնասիրել թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը,

- իրականացնել բովանդակության համակարգային կառուցվածքային վերլուծություն, ընդգծել հիմնական և երկրորդական տարրերը ու դրանց փոխադարձ տրամաբանական կապը,
- ընտրել գրաֆիկական ցուցադրության ձևը,
- համակարգել կառուցվածքը,
- քննադատաբար դիտարկել տարբերակը և փորձել փոփոխել այն (պարզեցնել ավելորդությունը, կրկնությունները վերացնելու առումով),
- իրականացնել գրաֆիկական և գունային ձևավորում,
- կազմել կարճ տրամաբանական պատմություն աշխատանքի բովանդակության մասին և ներկայացնել այն դասաժամին:

Գնահատման չափանիշներ՝

- բովանդակության համապատասխանությունը թեմային,
- տեղեկատվության ճիշտ կառուցվածքը,
- ներկայացված տեղեկատվության տրամաբանական կապի առկայությունը.
- ձևավորման պահանջներին համապատասխանությունը,
- աշխատանքի գրագետ շարադրումը և ներկայացումը,
- աշխատանքները ժամանակին ներկայացնելը։